

ՊԱՇՏՈՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ԱՇԽԱՏԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԺԱՄԿԵՏ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ

Ինստիտուցիոնալ հաճախորդների և
համագործակցության անհատական մենեջեր

Լրիվ դրույք

ք. Երևան, ՀՀ

Հնարավորինս շուտ

02/08/2022թ.

16/08/2022թ.

Երկարաժամկետ՝ 3 ամիս փորձաշրջանով

«Այդի Բանկ» ՓԲԸ-ն փնտրում է փորձառու և մոտիվացված թեկնածուի, ով կմիանա թիմին որպես Ինստիտուցիոնալ հաճախորդների և համագործակցության անհատական մենեջեր և պատասխանատվություն կկրի ստորև նշված պարտականությունները կատարելու համար.

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՀՀ ռեզիդենտ և ՀՀ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ հաճախորդների ներգրավվում, Բանկի կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ խորհրդատվության տրամադրում:
2. Ներգրավման նպատակով հաճախորդների հետ բանկի տարածքում և բանկի տարածքից դուրս հանդիպումների, այցելությունների իրականացում:
3. Առկա ՀՀ ռեզիդենտ և ՀՀ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց հաճախորդների սպասարկում:
4. Հաճախորդից բոլոր պրոդուկտներից ստացվելիք եկամտաբերության հաշվարկի, և արտոնյալ պայմանների հաստատման գործընթացի իրականացում (սոր սակագին, և այլն):
5. Հաճախորդների մոնիթորինգների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրում և մոնիթորինգի իրականացում:
6. Տեղեկատվական բազաների և թղթապանակների վարում:
7. Հաճախորդների հետ համապատասխան պայմանագրերի և համաձայնագրերի կազմման և կնքման պրոցեսների կազմակերպում:
8. Քարտային օվերդրաֆտերի, վճարային համակարգերի (ՊՈՍ տերմինալների), Rocket line 0 և այլ կորպորատիվ պրոդուկտների վաճառքների իրականացում:

ՊԱՅԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն կրթություն
- Նվազագույնը 2 տարվա աշխատանքային փորձ համապատասխան ոլորտում
- Բարձրագույն (նախընտրելի տնտեսագիտական) կրթություն
- Առնվազն 2 տարվա աշխատանքային փորձ ֆինանսաբանկային ոլորտում
- Հայերեն, Ռուսերեն, Անգլերեն լեզուների գերազանց իմացություն
- Բանկային պրոդուկտների և ծառայությունների իմացություն
- Բանկային օրենսդրության իմացություն
- Համակարգչային գիտելիքներ
- Հաղորդակցման հմտություններ
- Խնդիրների արագ և արդյունավետ լուծման կարողություններ

- Թիմում արդյունավետ աշխատելու ունակություն
- ճշտապահություն և պատասխանատվության զգացողություն
- Գործարար էթիկայի նորմերի իմացություն և դրանց կիրառում

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտային ակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե Ձեր գիտելիքները, մասնագիտական փորձը և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և Դուք հետաքրքրված եք միանալու ԱյԴԻ Բանկի թիմին, խնդրում ենք լրացնել հայտարարությանը կից ներկայացված դիմում-հայտը և այն ուղարկել hr@idbank.am էլ.փոստի հասցեին՝ մինչև հայտարարության վերջնաժամկետը՝ վերնագիր (subject) տողում պարտադիր նշելով հաստիքի անվանումը: Հարցազրույցի կիրավիրվեն նախնական ընտրությունն անցած դիմորդները:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԱյԴԻ Բանկ»-ը հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «ԱյԴԻ Բանկ» ՓԲԸ անվանումով: «ԱյԴԻ Բանկ»-ի առաքելությունն է հաճախորդների համար լինել առաջին ընտրության լավագույն նորարար Բանկ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքէջ <https://www.idbank.am/>: